# ԹԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ



*Սկիզբը՝ թիվ 22, 23*

Այսօր, երբ շատ ուսումնասիրողներ հակված են Թադեոս եւ Բարթողիմեոս առաքյալների ավանդական պատմությունը հայտարարել իրականությանը չհամապատասխանող, կամենում ենք նշել, որ այն արձանագրված է Խորենացուց էլ առաջ, մասնավորապես Փավստոս Բուզանդի կողմից: Վերջինս Հայոց եկեղեցին համարում է Թադեոս առաքյալի աթոռ («Նստուցին զնա (Վրթանեսի որդի Հուսիկին - Բ. Հ.) յաթոռն Առաքելոյն Թադէոսի») եւ միաժամանակ նաեւ նրա պապ Գրիգոր Լուսավորչի աթոռ («Յաթոռ հւրոյ հաւուն մեծին Գրիգորի...»): Մեկ այլ կապակցությամբ նա նշում է, որ կաթողիկոս Հուսիկը Թադէոս առաքյալի եւ Գրիգոր Լուսավորչի վիճակի հայրապետն էր («... սուրբ մանուկն Յուսիկն ըզհայրապետն զաթոռակալն զվիճակակալն զվիճակին Թադէոսի առաքելոյն եւ զնորին նմանոյ Գրիգորի»): Հարկ է նշել սակայն, որ Փավստոսը բոլոր կապակցություններով Հայոց եկեղեցին համարում է Թադեոս առաքյալի աթոռ եւ չի հիշատակում Բարթողիմեոս առաքյալի անունը:

Ավելի ուշ շրջանում, ինչպես հավաստում է Ասողիկի երկը, Հայոց եկեղեցու հետ են կապվում Թադեոս եւ Բարթողիմեոս առաքյալների անունները, որոնցից վերջինը նահատակվում է Արաբիոն (հիմա՝ Արեբանոս - Բ. Հ.) քաղաքում, որը, անկասկած, Խորենացու երկի Արեբանոս քաղաքի անվան աղավաղումն է: Պատմիչի խոսքերով՝ Թադեոս առաքյալի եւ Սանդուխտ կույսի նշխարները հայտնաբերվում են Վահան իշխանի օրոք:

Ինչպես վերը տեսանք, Խորենացին Թադեոսին վերագրում էր յոթանասուն առաքյալների թվին, իսկ այլ աղբյուրներում նա համարվում է յոթանասուներկու առաքյալներից մեկը: Սակայն Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ում ոչ միայն Բարթողիմեոսը, այլեւ Թադեոս առաքյալը համարվում է Հիսուս Քրիստոսի մերձավոր տասներկու առաքյալներից («... ի Թադէոսէ, որ եւս յերկուտասանից»): Հիշյալ հեղինակի երկում Բարթողիմեոսի նահատակության վայրն Արաբենոն քաղաքն է (հմմտ. Արեբանոսի հետ): Մեկ այլ կապակցությամբ՝ հեղինակը նշում է, որ Տրդատ արքայի տասնյոթերորդ տարում Գրիգոր Լուսավորիչը նստել է սուրբ առաքյալներ Բարթողիմեոսի եւ Թադեոսի աթոռին («եւ յեօթն եւ ի տասներորդ ամի արքայութեանն Տրդատայ նստաւ յաթոռ սրբոց առաքելոցն Բարթուղիմէոսի եւ Թադէոսի»): Նկատվում է մի նոր երանգ. Բարթողիմեոս առաքյալի անունը նախորդում է Թադեոսին: Անդրադառնալով Ներսես Մեծ կաթողիկոսի՝ Թորգոմա տան պատրիարքության գլուխ անցնելուն՝ հեղինակը կրկին հիշատակում է սուրբ առաքյալներ Բարթողիմեոսին եւ Թադեոսին, որոնք բաժին ընկան Ասքանազյան ազգին, այսինքն՝ հայերին («... զսուրբ առաքեալսն մեր զԲարթուղիմէոս եւ զԹադէոս, որք Ասքանազեան ազգին վիճակեցան...»): Եվ ոչ պակաս հետաքրքիր է նաեւ այն իրողությունը, որ չնայած Թադեոսն աշխատության սկզբում համարվել է տասներկու առաքյալներից մեկը՝ հետագա շարադրանքում նա յոթանասուն առաքյալներից է, որին Թովմաս առաքյալն ուղարկում է Եդեսիա՝ Աբգար թագավորին բուժելու:

Հետաքրքիր եւ արժեքավոր են Ստեփանոս Օրբելյանի հաղորդումները, որոնց տվյալները նա անկասկած քաղել է մեզ չհասած ինչ-որ սկզբնաղբյուրից: Դրանց համաձայն՝ Բարթողիմեոս առաքյալը գալիս է Սյունիք՝ Պարսից Ատրպատականի վրայով, անցնում է Երասխ գետը եւ քարոզության սկիզբը դնում է Որդվաս (Որդուաս) գյուղում, այնուհետեւ՝ Արեւիքում, Բաղաց տանը եւ Գողթնում, որտեղ, իմիջիայլոց, վերը հիշատակված Որդվաս գյուղն էր: Գողթնում նա շինում է Տյառնընդառաջի վանքը՝ համաձայնությամբ գավառի իշխան Շարի, որի որդին էր Խոսրովը, թոռը՝ Վահանը, իսկ կողակիցը՝ Նշնա իշխանուհին: Իր աշակերտներից Կումսի անունով մեկին նա ձեռնադրում է եպիսկոպոս, իսկ ինքը գալիս է Վանանդ գյուղը: Այստեղ մահանում է նրա աշակերտներից Հուսիկը, որին հողին են հանձնում նույն գյուղում եւ փոքրիկ մատուռ կառուցում: Կառուցում է նաեւ սբ. Թովմայի եկեղեցին եւ այնուհետեւ ուղեւորվում հայոց մայրաքաղաք Դվին (*): Կումսիի վախճանվելուց հետո նրա փոխարեն առաջնորդ են կարգում Խուժիկ Բաբելասին: Հետո սուրբ Թադեի մոտ են ուղարկում Մուշե անունով մեկին, որը սակայն ես դառնալ չի կարողանում: Այնուհետեւ նրանց առաջնորդներն են դառնում տարոնցի Մովսեսը, տարոնցի Սահակը, Զիվանդասը, Ստեփանոսը եւ Հովհաննեսը:

Ստեփանոս Օրբելյանի հաղորդման մեջ ուշադրություն է գրավում երկու առանձնահատկություն: Խուժիկ Բաբելասի առաջնորդ կարգվելը, ըստ էության, վկայում է Բարթողիմեոսի եւ նրա աշակերտների գալուստը Պարսից, սակայն միանգամայն ժամանակավրեպ է Դվինը հայոց մայրաքաղաք հռչակելը I դարում, երբ այն որպես քաղաք դեռեւս կառուցված չէր: Գոնե, մեր կարծիքով, ավելի ուշ դարերում, երբ Արտաշատը քաղաքական եւ կլիմայական պատճառներով վաղուց արդեն մայրաքաղաք չէր, նրա անունը փոխարինվում է Դվին քաղաքի անվանումով, որը ծնունդ էր առել IV դարի 30-ական թվականներին Արտաշատ մայրաքաղաքից ոչ շատ հեռու գտնվող նույնանուն բլրի վրա եւ V դ. վերջերից վերածվել Հայոց մայրաքաղաքի:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՊԵՏՐՈՍ ԱՐՔ. ԲԵՐԴՈՒՄՅԱՆ

# ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ

## ԳԼՈՒԽ Ա

**Աշխարհի Փրկիչ մեր Տեր Հիսուս Քրիստոս մեղրածորան բերանով հեզաբար հանդիմանում է ասելով. «Ինչո՞ւ եք ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում, իսկ ինչ ասում եմ, չեք անում» (Ղուկ. Զ 46):**

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Մեծ նախատինք է մեկին որպես տեր ընդունել, բայց ինչ նա ասում է, չկատարել, ուստի Մաղաքիայի միջոցով գանգատվում է Տերը՝ ասելով. *«Եթե Տեր եմ, ո՞ւր է Իմ պատիվը եւն»* (Մաղ. Ա 6): Տիրոջ պատիվը Նրանից երկնչելու եւ Նրա պատվիրանը կատարելու մեջ է, բայց, ըստ Պողոսի, կեղծավորները խոսքով հավատում են, բայց գործերով ուրանում. այդպիսիների հավատը մեռած է եւ ոչ թե կենդանի, ինչպես աստվածային Հակոբոսն է ասում. *«Ինչպես մարմինն է առանց հոգու մեռած, այնպես էլ հավատքը՝ առանց գործերի»* (Հակ. Բ 26):

Քանի որ ինչպես նյութն առանց կերպարանքի չի կարող լինել, այնպես էլ հավատքը՝ առանց գործերի: Որովհետեւ հավատքն իր հետ նաեւ իր գործն ունի (մանավանդ սիրո), ինչպես հոգին եւ կերպարանքը. ինչպես որ մեռած մարդը մարդ չէ, այնպես էլ մեռած հավատքը. այդ պատճառով դեւերի հավատքին է նմանվում, որն իրական հավատք չէ՝ զրկված լինելով սիրուց: Անգործ հավատքը նմանվում է աներեւույթ եւ անպատրաստ երկրի, իսկ գործունը՝ բոլոր զարդերով լուսավորվածին ու պատրաստվածին:

Գործուն հավատքն առաքյալի կողմից սահմանվում է որպես հուսացված բաների հաստատումը եւ ապացույցը, այսինքն՝ ցույց տվողն այն բաների, որոնք չեն երեւում (տե՛ս Եբր. ԺԱ 1). ուստի այն նմանվում է ընտիր եւ պայծառ դիտակի, քանզի ինչպես որ վերջինս անտեսանելի եւ հեռավոր բաներն է ցույց տալիս, այսպես էլ հավատքը, ըստ Նարեկացու, հոգու աչքերից ծածկված աստվածային բաներն է հայտնում եւ ներկայացնում: Սա է վերին իմաստությունը, որով երկնային բաներն ենք տեսնում, ինչի մասին Ս. Հոգու բնարն ասում է. *«Դու, Տե՛ր, Քո իմաստությամբ անհայտ եւ ծածկված բաներն ինձ հայտնեցիր»* (Սաղմ. Ծ 8), այսինքն՝ Ս. Հոգով եւ հավատքով, ուստի Տերն այս նյութի մասին երկու ընտիր առակներ է ներկայացնում:

Նախ՝ այն նմանեցնում է վառած ճրագի, ըստ այնմ. *«Մարմնի ճրագն աչքն է»* (Մատթ. Զ 22), իսկ հոգու ճրագը՝ հավատքը: *Եթե քո աչքը պարզ է*, ճրագի պարզությունը ձեթով լի լինելն է, որ հատկապես նշանակում է սերը, ողորմությունը, իմաստությունը եւ մյուս առաքինությունները.- *ապա ամբողջ մարմինդ լուսավոր կլինի*, նույնպես եւ հոգին. այսպիսին էր իմաստուն կույսերի առատ ձեթով լի լապտերը: *Իսկ եթե քո աչքը չար է*, այսինքն՝ խավար, որն [այս] խորհրդի համաձայն մեռած հավատքն է նշանակում,- *ապա ամբողջ մարմինդ խավար կլինի*, այսինքն՝ խավարային:

Խորհրդապես նշանակում է ամբողջ հոգին եւ մեղավորների հավատքը. այսպիսին էր հիմար կույսերի լապտերը (տե՛ս Մատթ. ԻԵ 3). որովհետեւ ինչպես որ ճրագն առանց ձեթի խավար է, այնպես էլ հավատքը՝ առանց գործերի, հետեւաբար ըստ ավետարանական խրատի՝ պետք է զգույշ լինենք, գուցե հավատքի լույսը, որ մեր մեջ է, խավար լինի (տե՛ս Ղուկ. ԺԱ 35), այսինքն՝ սիրուց դադարած ու անկերպ:

Այլաբանորեն «ճրագը» խորհրդանշում է Եկեղեցու առաջնորդին. եթե [նա] իմաստության եւ սիրո ձեթով առատ է, ապա նախ ինքը եւ ապա ամբողջ Եկեղեցին են լուսավորվում եւ պայծառանում, իսկ եթե [նրա] իմաստության, սիրո ձեթը պակասել է, եւ դրանով էլ [նա] չար է դարձել, ապա նախ ինքը եւ ապա ամբողջ Եկեղեցին խավարի մեջ կլինեն. այսպիսին են անգետ հովիվները:

Երկրորդ՝ Տերը գործնական հավատքը նմանեցնում է վեմի, որը հաստատուն է, իսկ առանց գործերինը՝ ավազի, որը դյուրասասան է՝ այսպես ասելով. *Ամեն որ, ով լսում է Իմ խոսքերը* (Մատթ. Է 24), այսինքն՝ հավատում է Իմ խոսքերին, քանզի



հավատքը լսելուց է՝ ըստ առաքյալի, իսկ լսելը՝ Քրիստոսի խոսքից (տե՛ս Հռոմ. Ժ 17),- *եւ դրանք կատարում է*, որով կերպարանք է ստանում հավատքը, կնմանվի այն իմաստուն մարդուն, ով իր տունը վեմի վրա շինեց. իմաստունին հատուկ է տունը կառուցելիս հիմքը հաստատուն դնել: Ով հավատում է եւ կատարում, իմաստունի նման է, որովհետեւ իր տան հիմքը վեմի վրա է դնում: Վեմն Ինքը Քրիստոս է, Ով իբրեւ իմաստուն հիմքը դրեց. *«որովհետեւ ոչ որ չի կարող ուրիշ հիմք դնել, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոս է»* (Ա Կորնթ. Գ 11). եթե մեկն այս հիմքի վրա տուն շինի, ապա տունը չի շարժվի: Ավետարանական խոսքերը գեղեցիկ հոգեւոր քարեր են, որոնք դրված լինելով հիմնական քարի՝ Քրիստոսի վրա՝ անշարժ են մնում. *«Եվ դուք՝ իբրեւ կենդանի քարեր, կառուցվում եք իբրեւ հոգեւոր տաճար»* (Ա Պետ. Բ 5):

Ով հավատում է եւ կատարում, նմանվում է Աստծուն, Ով իր տան հիմքը հաստատուն էր դնում. *«Այն ժամանակ, երբ Նա հաստատուն կերպով երկրի հիմքերն էր դնում»* (Առակ. Ը 29), Նրա հետ էր անսասան Իմաստությունը: **Անձրեւները թափվեցին:** Օդային դեւերին է ցույց տալիս, ինչպես որ Երգ երգոցում է ասվում այս անձրեւի մասին. *«Անձրեւներն անցան-գնացին»* (Երգ. Բ 11). ցույց է տալիս, որ փորձության սկիզբը դեւից է լինում, բայց ոչ առանց Աստծո նախախնամության, դրա համար անձրեւի է նմանեցվում, որ վերեւից է տեղում:

Մասնավորապես նշանակում է դեւի դրդումը մարմնական զեղ մեղքերի վրա, որոնք [նա] անձրեւի նման մարդու սրտի մեջ է կաթեցնում: **Գետերը հորդեցին** եւն. գետերի հորդացումն անձրեւների պատճառով է. նշանակում է, որ դեւի գալու ժամանակ մեծամեծ փորձություններ են առաջանում. «գետը» բարոյականապես նշանակում է մեղքի ախտի հեղեղը, որը սրտի մեջ առաջանում է դեւի ներգործությունից ու անձրեւից:

Այլաբանորեն նշանակում է բռնակալների հալածանքները, ըստ այնմ. *«Ահա ես դրանց վրա եմ հեղում հորդ ու հզոր գետի ջուրը»* (Ես. Ը 7), այսինքն՝ կռապաշտների արքային, որին Իսրայելի վրա շարժեց. սրանք դեւի դրդմամբ անձրեւներով են սաստկանում:

**Քամիները փչեցին:** «Քամիները» աշխարհի հարստությունների ունայն բաղձանքներն են, որոնք ինչպես քամիներ՝ տերեւի նման միշտ շարժում են մարդկանց սիրտը: Բայց առաքինի մարդը չի սասանվում նրանցից, որովհետեւ իր հոգեւոր տան հիմքն անշարժ վեմի վրա է հաստատել, սակայն ըստ ստոյիկների՝ իրեն պատրաստում է եւ կամենում, որ նաեւ [անձրեւ] տեղա:

**Իսկ ով լսում է եւ չի կատարում, կնմանվի հիմար մարդուն:**

Արդ, ով հավատում է, բայց չի կատարում այն, ինչին հավատում է, իրապես հիմար է. որովհետեւ հավատում է անշարժ վեմին, սակայն [իր տունը] շինում է ավազի վրա. հավատում է երկնավորին, բայց երկրավորն է գործում. այսպիսինի հավատքն անձեւ է եւ դեւերի հավատքի նման. ի՞նչ օգուտ է մարած ճրագ եւ խավար աչքեր ունենալը: Եթե այսպիսիների վրա մեղքի ախտի անձրեւը տեղա, ապա տունը, կավակերտ լինելով, կփլվի. եթե բռնակալների հալածանքների գետերը հարձակվեն, ավազահիմն լինելով, կկործանվի. եթե հարստության ցանկության ուժգին մրրիկները գան, ապա նրանցից ոտնակոխ կլինի. եթե այս աշխարհի պատրանքը փչի, տեղից կշարժի, եւ այլեւս նրա տեղը չի երեւա: Այսպիսիներին է Տերը հանդիմանում՝ ասելով. **«Ինչո՞ւ եք ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում, իսկ ինչ ասում եմ, չեք անում»**. ինչո՞ւ եք հավատում, բայց չեք կատարում այն, ինչին հավատացիք, այսինքն՝ ճշմարտության ճանապարհը ճանաչում եք, բայց սուրբ պատվիրանից հեռանում եւ սրանով կամքն իմացող [Տիրոջ] ծառայի նման շատ ծեծի ձեզ դատապարտում, քանզի հավատացյալ մեղավորի պատիժն ավելի խիստ է լինելու, քան անհավատինը:

Բայց դու, որ սա ընթերցում ես, հասկացի՛ր, եւ ինչ որ սովորում ես, գործով կատարի՛ր, որպեսզի չլինի թե դու էլ Տիրոջից հանդիմանվես. **«Ինչո՞ւ եք ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում եւն»:**

*Աշխարհաբարի վերածեց*
*Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԸ*



# ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
## ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ ՕՐՈՔ

*Սկիզբը՝ էջ 5*

Նվաճողական ամբարտավանությամբ լի կայսեր համար Հայաստանի անկախության պահպանումը դիտվեց որպես ապստամբություն, քանի որ, ըստ Դիոն Կասիոսի Պատմությունը համառոտող Քսիփիլինոսի վկայության, Տիգրան IV-ը նախապես չէր ստացել կայսեր համաձայնությունը: Այս նկատի ունենալով՝ Դիոն Կասիոսը գրել է. «երբ հայերն ապստամբեցին, եւ պարթեւներն էլ գործակցում էին նրանց, Օգոստոսն այս ամենից խիստ նեղացավ եւ չէր իմանում ինչպես վարվել: Քանզի ինքը ծերության պատճառով արդեն չէր վստահում անձամբ արշավելու, եւ Տիբերիոսն էլ, ինչպես ասվեց, արդեն հրաժարվել էր, իսկ հզորներից որեւէ մեկին ուղարկել նա չէր համարձակվում, մինչդեռ Գայոսն ու Լուկիոսը դեռեւս երիտասարդ էին եւ անփորձ պետական գործերի մեջ»:

Կարելի է տեսնել, թե իրականում որքան հեռու էր Օգոստոսը Հայաստանը կայսրությանը ենթակա երկիր համարելուց: Հռոմում նույնիսկ չէին կարողանում կողմնորոշվել, թե ում կարելի էր ուղարկել Արեւելք՝ Հայաստանի եւ Պարթեւստանի դեմ գործողությունները գլխավորելու համար: Ընտրությունն ընկավ Օգոստոսի հիշատակված երկու թոռներից Գայոսի վրա, որը գալով Սիրիա (Ասորիք) նահանգը, ինչպես նշել է Դիոն Կասիոսը, մեծ հաջողություն չունեցավ ու վիրավորվեց:

Տիգրան IV-ն անկախ է թագավորել Մեծ Հայքում, ինչպես երեւում է նրա հատած դրամների վրա արված «ԱՐՔԱՅԻ ՏԻԳՐԱՆԻ», «ԱՐՔԱՅԻ ՄԵԾԻ ՏԻԳՐԱՆԻ ՀԵԼԼԵՆԱՍԵՐԻ», «ԱՐՔԱՅԻ ՄԵԾԻ ՏԻԳՐԱՆԻ» եւ, հատկապես, «ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱ ՏԻԳՐԱՆ» մակագրություններից: Տիգրանը թագավորում էր իր քրոջ՝ Էրատոյի հետ միասին, որի պատկերը դրոշմված է այս վերջին բովանդակությամբ դրամի վրա՝ «ԷՐԱՏՈ ՏԻԳՐԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՔՈՒՅՐ» մակագրությամբ:

Այնուհետեւ Մեծ Հայքի թագավորության գահին անսպասելիորեն հայտնվում է Արտավազդ III-ը, որը, ինչպես ենթադրվում է, Արտաշես II-ի եւ Տիգրան III-ի եղբայրն էր: Նա, ըստ Տակիտոսի, Օգոստոս կայսեր հանձնարարությամբ իր հայրենակիցների վրա թագավոր էր նշանակվել: Նույնպես անսպասելիորեն Արտավազդ III-ը վերանում է Հայաստանի քաղաքական ասպարեզից: Ինչպես գրել է Տակիտոսը, Արտավազդը «գահընկեց արվեց ոչ առանց մեր զենքի վարկաբեկման»: Իսկ դա նշանակում է, որ Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականությունը եւս մեկ անգամ ձախողվեց Հայաստանում:

Սակայն Ք. ծ. ա. 2 թ. քաղաքական իրավիճակն Առաջավոր Ասիայում կտրուկ փոխվեց: Պարթեւստանում տեղի ունեցավ պալատական հեղաշրջում: Հրահատ IV-ն իր կնոջ՝ Մուսայի սադրանքով թունավորվեց իր որդու՝ Հրահատակի ձեռքով, որը եւ տիրացավ պարթեւական գահին: Գայոս Կեսարը, որ նստած էր Ասորիքում, Օգոստոսի գործակալների միջոցով իրականացնում էր կայսրության քայքայիչ գործողությունները Պարթեւստանում եւ Հայաստանում: Տիգրան IV-ն Օգոստոս կայսեր հրամանով չգնաց Գայոս Կեսարի մոտ: Քաղաքական ընդհանուր խառնաշփոթին գումարվեցին ինչ-որ բարբարոսական ցեղերի հարձակումները Հայաստանի վրա, որոնց ընթացքում սպանվեց Հայոց գահին կրկին բարձրացած Տիգրան IV-ը, իսկ Էրատոն հայտնվեց հռոմեացիների ուժեղ ճնշման տակ եւ Ք. ծ. ա.1 թ. զրկվեց գահից:

Գայոս Կեսարը, օգտվելով հանգամանքից, Հայոց թագը հանձնեց Մար Արտավազդի որդուն՝ Արիոբարզան մեդացուն՝ Ատրպատականի արքայատոհմից, որը խնամիական կապ ուներ Արտաշեսյանների հետ, իսկ Ատրպատականը դեռեւս Արտաշես II-ի ժամանակ Հայոց թագավորության կազմում է եղել: Գայոսի խառնվելը Հայաստանի գործերին անհետեւանք չմնաց. հայ ժողովուրդն ապստամբեց եւ իր պայքարի հենակետը դարձրեց Արտագերս բերդը, որի հրամանատարն էր Ադդոնը կամ, ըստ Ստրաբոնի, Ադոռը: Այստեղ ծավալվեցին հերոսական իրադարձություններ, որոնց ընթացքում հայ պաշտպանները ետ մղեցին հռոմեացիների մի քանի գրոհներ: Քաջարի հրամանատար Ադդոնը խոցեց Գայոսին, սակայն ինքն էլ զոհվեց: Օգոստոս կայսրը Հայոց թագը հանձնեց անսպասելի մահացած Արիոբարզանեսի որդուն՝ Արտավազդ IV-ին:

Հայկազյան-Արտաշեսյան հարստության մայրամուտը չէր նշանակում, թե հայկական պետությունը վերացավ կամ նվաճվեց: I դարում Հայոց թագավորությունը շարունակեց իր գոյությունը երկրի հարավային մասում՝ ի դեմս Ուռհա-Եդեսիայում գահակալող Հայոց Աբգար արքայի թագավորության, որն ընդգրկում էր Մեծ Հայքի հարավը, Հայոց Միջագետքը՝ Հյուսիսային Միջագետքի որոշ տարածքներով հանդերձ: Երկրի մնացած մասում, Հռոմի ու Պարթեւաստանի մրցակցության պայմաններում, մինչեւ I դարի 60 թ. իրար հաջորդեցին Տիգրան V, Ոնոն, Զենոն-Արտաշես, Արշակ (I), Կոտիս (Փոքր Հայքի ընդգրկմամբ), Միհրդատ, Հռադամիստ, Տիգրան VI թագավորները:

Նույնիսկ այդպիսի բարդ քաղաքական պայմաններում, երբ այդ թագավորներից ոմանք Հայաստանին հարեւան եւ Հռոմին ենթակա երկրների արքայազներից էին, շնորհիվ հայ ժողովրդի՝ օտար նվաճողների դեմ մղած համառ եւ անձնուրաց պայքարի, հնարավոր եղավ I դարի ընթացքում պահպանել երկրի ամբողջականությունը եւ ամրապնդել Մեծ Հայքի թագավորությունը:

*Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

---

## ԱՆՏԻՈՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԲ ԻԳՆԱՏԻՈՍ ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ
# ԹՈՒՂԹ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ



*Սկիզբը՝ թիվ 23*

### ԳԼՈՒԽ Դ

Ցնծում եմ, որ արժանի եղայ խօսելու ձեզ հետ, եւ ուրախ եմ նրանով, ինչը գրեցի ձեզ, որովհետեւ ուրիշ ոչ ոքի չէք սիրում, բացի նրանից, ով Աստծով է ապրում:

[Ժ] Ուրիշ մարդկանց համար նոյնպէս աղօթէք, որ դառնան առ Աստուած, որովհետեւ ապաշխարութեան յոյս կա՛յ նրանց համար: Աղաչէք նրանց, որ ձեր գործերում աշակերտեն ձեզ: Եւ նրանց մեծաբանութեան դիմաց խոնարհութիւն ունեցէք, ի պատասխան նրանց հերձուածի՝ աղօթէք, հակառակ նրանց մոլորութեան՝ դուք հաւատքի մէջ հաստատուն մնացէք, նրանց անմտութեան դիմաց դուք հանդարտ եղէք եւ մի՛ ջանացէք նրանց նմանուել: Այլ հեզութիւն ունեցէք եւ ջանացէք Աստծուն նմանուել, որպէսզի չարի արմատ չգտնուի ձեր մէջ, այլ մարմնով ու հոգով մնաք ամենայն մաքրութեամբ եւ ամօթխածութեամբ ի Յիսուս Քրիստոս:

[ԺԱ] Վերջին ժամանակներն են, պատկառէ՛ք Աստծոյ երկայնմտութիւնից, որպէսզի դա ձեզ դատաստանի չարժանացնի: Վախենա՛նք, եղբայրներ, գալիք բարկութիւնից եւ կամ սիրե՛նք այն շնորհը, որն ունենք այս աշխարհում, միայն թէ ճշմարիտ կեանքով լինենք Յիսուս Քրիստոսի մէջ: Թող ոչինչ հաճելի չլինի ձեզ, բացի Նրանից, Ում համար ես էլ եմ նոյն յոյսով շրջում շղթաների մէջ, որոնք շղթաներ չեն, այլ հոգու մարգարիտներ, որոնցով Աստուած կը տայ ինձ յառնել մեռելների միջից: Եւ ձեր աղօթքներով կը կարողանամ միշտ հաղորդակից լինել եփեսացի քրիստոնեաների հետ, ովքեր ամէն ժամ առաքեալների հետ էին մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութեամբ:

[ԺԲ] Գիտեմ, թէ ով եմ կամ ում եմ գրում. ես դատապարտեալ եմ, իսկ ձեզ վրայ ողորմութիւն եղաւ, ես՝ տագնապի մէջ, իսկ դուք՝ հաստատուած: Դէպի ձեզ են [գալիս] այն ճանապարհորդները, ովքեր նահատակւում են Աստծոյ համար: Դուք սուրբ Պօղոսի խորհրդակիցներն էք, ով ունի երանութիւնների վկայութիւնը եւ ում ոտքերի պատուանդանի տակ թող տայ Աստուած ինձ գտնուել, երբ ներկայանամ Աստծուն: Արդ, իմ բոլոր նամակներում յիշում եմ ձեզ ի Յիսուս Քրիստոս:

### ԳԼՈՒԽ Ե

[ԺԳ] Յաճախակի, ամէն ժամ, հաւաքուէք Գոհութեան եւ փառաբանութեան համար, քանզի ձեր միաբանութիւնից ու հաւատքից տկարանում է սատանայի զօրութիւնը եւ եղծւում՝ նրա յիշատակը: Ոչինչ աւելի չէ, քան հաւատն ու խաղաղութիւնը, որոնցով խափանւում են երկնաւորների եւ երկրաւորների [յարուցած] բոլոր պատերազմները:

[ԺԴ] Սրանցից ոչ մէկն էլ ձեր կողմից չի մոռացուած, եթէ կատարելապէս ձեր մէջ ունէք Յիսուս Քրիստոսին: Հաւատն ու սէրը սկիզբն ու աւարտն են. հաւատը սկիզբն է, իսկ սէրը՝ աւարտը: Ուր այս երկուսը միասին են, այնտեղ են նաեւ Աստուած եւ միւս բոլոր բարի գործերն ու առաքինութիւնները: Չկայ մէկը, որ խոստովանի, թէ հաւատ ունի, եւ մեղանչի, եւ ոչ՝ որ սէր է ստացել, եւ ատի. որովհետեւ ծառն իր պտղից է ճանաչւում [Մատթ. ԺԲ 33]: Այդպէս էլ ովքեր խոստովանում են, թէ Քրիստոսինն են, իրենց գործերից են ճանաչւում: Բարւոք չէ գործերի միայն խոստումը՝ առանց մինչեւ վերջ [տեւող] արդիւնքի եւ հաւատքի զօրութեան:

[ԺԵ] Լաւ է, երբ մէկն ինչ-որ բան է եւ լռում է, քան որ ոչ մի բան չէ եւ խօսում է: Լաւ է, երբ մէկը սովորեցնում է այն, ինչ նախ ինքը գործում է եւ ապա՛ ասում: Մէկ է Ուսուցիչը, Ով գործում է եւ ասում՝ լռութեամբ կատարելով Իր Հօրն արժանի գործեր: Ճշմարտապէս զօրաւոր է, ով ստացել է Յիսուսի խօսքը եւ ականջ է դնում Նրա հեզութեանը՝ կատարեալ լինելու համար, որպէսզի գործի, ինչ որ խօսում է, եւ ճանաչուի նրանով, ինչի մասին լռում է: Տիրոջ կողմից մոռացուած ոչինչ չկայ, նաեւ մեր ծածուկ բաներն են Նրան յայտնի: Ամէն ինչ գործենք այնպէս, ասես Նա մեր մէջ է բնակուած, որպէսզի Նրա տաճարը լինենք, իսկ Նա՝ մեր Աստուածը, եթէ արդարութեամբ սիրենք Նրան:

[ԺԶ] Մի՛ խաբուէք, եղբայրներ, ովքեր սիրում են [ուրիշների] ինչքը, Աստծոյ արքայութիւնը չեն ժառանգի: Եթէ այսպիսիք մեռնում են, որքա՞ն առաւել [մահուան արժանի են] նրանք, ովքեր չար ուսմունքով ապականում են Աստծոյ հաւատը, ինչի համար Փառքի Տէրը՝ Յիսուս Քրիստոսը, խաչուեց: Ով սա ուրանում է, անշէջ կրակի մէջ կ'ուղարկուի, ինչպէս նաեւ նրան լսողը:

[ԺԷ] Մեր Տէրն այն բանի համար անոյշ իւղն ընդունեց Իր գլխին, որ Իր եկեղեցին անապական անուշահոտութեանը բերի: Ուրեմն մի՛ օծուէք այս աշխարհի իշխանի չարութեան հոտով, որպէսզի ձեզ չհեռացնի խոստացուած կեանքից: Սրա՛ համար ընդունեցինք Աստծոյ գիտութիւնը, որը Յիսուս Քրիստոսն է: Ուրեմն ինչո՞ւ ենք յիմարաբար կորչում եւ շնորհից չենք պարտաւորւում հաւատալու, թէ մեր Քրիստոս Աստուածը ճշմարտապէս չարչարուեց:

[ԺԸ] Հոգիս երկրպագում է խաչին, որն անհաւատների համար գայթակղութիւն է, իսկ ձեզ՝ հաւատացեալներիդ համար՝ փրկութիւն եւ յաւիտենական կեանք: Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է քննիչը, ո՞ւր է նա, ով պարծենում է աշխարհիկ գիտութիւններով:

### ԳԼՈՒԽ Զ

Մեր Աստուած Յիսուս Քրիստոսը յղացուեց Մարիամից, Հայր Աստծոյ տնօրինութեամբ, ծնուեց Սուրբ Հոգու միջոցով, Դաւթի զաւակից, եւ մկրտուեց՝ մաքրելու ջրերի ապականութիւնը:

[ԺԹ] Եւ Մարիամի կուսութիւնն ու նրա ծնելը, այլեւ Տիրոջ մահը ծածուկ պահուեցին այս աշխարհի իշխանից: Զարմանալի եւ մեծաձայն երեք խորհուրդ կատարուեց Աստծոյ խոնարհութեամբ: Ինչպէ՛ս աշխարհում յայտնի դարձաւ երկնքում ծագած աստղը, որն առաւել էր, քան բոլոր աստղերը: Ինչպէ՛ս անպատմելի էր նրա լոյսը, եւ տարբեր՝ նրա տեսքը: Եւ բոլոր աստղերն արեգակի եւ լուսնի հետ գունդ կազմեցին այդ աստղի համար, որովհետեւ նրա լոյսն առաւել էր, քան բոլորինը: Եւ աղաղակ եղաւ, թէ որտեղի՞ց է նրա այդ նոր կերպարանքը, որ նման չէ միւսներին: Եւ այս պատճառով խափանւում էին աստղագէտների բոլոր կախարդանքները եւ սպառւում՝ չարի խաբէութիւնները, հին թագաւորութիւնը քակւում էր Աստծոյ յայտնութեամբ, Ով մարմնացաւ այս նոր յաւիտեանի կեանքի համար: Սա եղաւ սկիզբն այն ամէնի, որ Աստծով իրականացաւ (Խօսքը Տիրոջ՝ Նրա Հօր կողմից կանխապէս որոշուած ու պատրաստուած տնօրինութիւնների մասին է, որոնցից առաջինը եղաւ Նրա ծնունդը.- թրգմ.):

Սրանից բոլորը միասին զարհուրեցին, որովհետեւ մահուան խափանումն էր իրագործւում:

[Ի] Եթէ իմ Տէր Յիսուս Քրիստոսն ինձ արժանի դարձնի, ըստ Նրա կամքի՝ ձեզ գրելիք իմ միւս թղթում կը յայտնեմ ձեզ այն խորհրդի տնօրինութեան մասին, որի մասին սկսեցի [խօսել], Նոր Մարդու վերաբերեալ, Ով Յիսուս Քրիստոսն է, Նրա հաւատով ու սիրով, չարչարանքներով ու յարութեամբ: Մանաւա՛նդ, եթէ Տէրն ինձ յայտնի, կ'ասեմ, եթէ ամէնքդ՝ ձեզանից իւրաքանչի՛ւրը, միասին հաւաքուէք շնորհով եւ մէկ հաւատքով Յիսուս Քրիստոսի, Ով մարմնով եղաւ Դաւթի զաւակից եւ մարդու Որդի է եւ Աստծոյ Որդի: Իսկ այժմ՝ ուղիղ մտքով լսէ՛ք եպիսկոպոսին ու քահանաներին եւ մշտապէս բեկանէ՛ք մէկ Հացը, որը կեանքի դեղ է: Որովհետեւ ով մաքրութեամբ ընդունում է նրանից, չի մեռնում, այլ Յիսուս Քրիստոսի միջոցով ապրում է Աստծով:

[ԻԱ] Հոգիս թող ձեր հոգիների փոխարէ՛ն լինի (Ս. Իգնատիոսի թղթերում յաճախ հանդիպող այս խօսքը սիրոյ արտայայտութիւն է, որի իմաստը կարող է լինել՝ «թող ես զոհ դառնամ ձեզ համար»), եղբայրներ, ինչ որ ուղարկեցիք ինձ Զմիւռնիա, ընդունեցի, որովհետեւ այնտեղից եմ գրում ձեզ: Գոհանում եմ Աստծուց եւ սիրում եմ Պողիկարպոսին. յիշէ՛ք ինձ շարունակ, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսն էլ ձեզ է [յիշում]: Աղօ՛թք արէք Ասորիքի եկեղեցու համար, որովհետեւ այնտեղից եմ շղթայակապ տարւում Հռոմ՝ սրանում գտնուող հաւատարիմ առաքեալի նման, եթէ Աստծուց պատուի արժանանամ: Ո՛ղջ եղէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի՝ ամէնի Յոյսի, Հայր Աստծով: Շնո՜րհ ձեզ: Ամէն:

*Թարգմանությունը՝ Ս. Ս.-ի*

